

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ տրամադրման պայմանները		
Վարկի արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար	
Վարկի նվազագույն/առավելագույն չափը	1,000,000 - 25,000,000 ՀՀ դրամ 2,000 - 100,000 ԱՄՆ դոլար	
Վարկի ժամկետը	1 - 120 ամիս	
Տարեկան տոկոսադրույքը	անվանական	փաստացի
	ՀՀ դրամ 16-20% ԱՄՆ դոլար՝ 14-18%	ՀՀ դրամ 17.87-22.66% ԱՄՆ դոլար՝ 14.94-19.75%
Անկախ կազմակերպության կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկի տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսադրույքի կրկնապատիկը:		
Վարկի նպատակը	Վարկը տրամադրվում է անշարժ գույքի կառուցման, վերակառուցման և վերանորոգման նպատակով:	
Վարկ/գրավի արժեք հարաբերության առավելագույն չափը	Անշարժ գույքի գնահատված արժեքի մինչև 70%	
Վարկի տրամադրման պահին միանվագ գանձվող՝ վարկի տրամադրման վճար	ՀՀ դրամով տրամադրվող վարկերի դեպքում՝ վարկի գումարի 2.0 %-ի չափով, ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում՝ 1.5%-ի չափով	
Վարկային պատմության հարցում	3,000 ՀՀ դրամ	
Գույքի գրավադրման հետ կապված օժանդակ ծառայություններ	Նոտարական վավերացում՝ 15,000 ՀՀ դրամ կադաստրային ծախսեր՝ 37,000 ՀՀ դրամ	
Վարկի մարումը, տոկոսագումարների հաշվարկման եղանակը	Հավասարաչափ ամորտիզացիա - յուրաքանչյուր ամիս վարկի գումարի հավասարաչափ մարում, վարկի գումարի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումար՝ տարին ընդունելով 365 օր: Անուիտետային - յուրաքանչյուր ամիս հավասարաչափ մարվող գումար, որը ներառում է և՛ վարկի գումարը, և՛ տոկոսագումարը:	
Տույժեր	Ժամկետանց վարկի գումարի համար տույժ՝ օրական 0.13% Ժամկետանց տոկոսագումարի համար տույժ՝ օրական 0.13%	
Վարկի ժամկետից շուտ մարման տույժ	1 տարվա ընթացքում՝ Վարկի վաղաժամ մարված գումարի 0.6%-ի չափով, 2 տարվա ընթացքում՝ Վարկի վաղաժամ մարված գումարի 0.4%-ի չափով, 3 տարվա ընթացքում՝ Վարկի վաղաժամ մարված գումարի 0.2%-ի չափով,	
Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ✓ դրական կամ չեզոք վարկային պատմություն ✓ բավարար եկամուտներ ✓ սեփականության առկայություն ✓ լրացուցիչ գրավի և/կամ երաշխավորության առկայություն 	

<p>Վարկի տրամադրման մերժման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> ✓ հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում ✓ բացասական վարկային պատմություն ✓ հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտ
<p>Արտոնություններ բարեխիղճ հաճախորդներին</p>	<ul style="list-style-type: none"> ✓ Կազմակերպությունում մեկից ավելի վարկավորման դեպքում վարկի տրամադրման վճարը կազմում է վարկի գումարի 1.5 % ԶԶ դրամի դեպքում և 1.0 %՝ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում: ✓ Վարկի տրամադրման վճարի չափը խորհրդի որոշմամբ կարող է փոփոխվել: ✓ Գործադիր տնօրենի որոշմամբ հնարավորություն է ընձեռնվում հաճախորդին օգտվել արտոնյալ ժամկետից, որի ընթացքում վճարվում է միայն տոկոսագումար (մայր գումար չի վճարվում):
<p>Վերաֆինանսավորվող վարկերի համար կազմակերպության կողմից կարող են սահմանվել այլ արտոնյալ պայմաններ</p>	
<p><u>ՏԵՂԵԿԱՑՈՒՄ</u></p>	
<ul style="list-style-type: none"> ✓ Վարկային հայտի վերաբերյալ որոշումը կայացվում է ամբողջական փաստաթղթերը ներկայացնելուց հետո առավելագույնը 1 աշխատանքային օրում: ✓ Վարկային հայտ ներկայացնող անձը վարկ տրամադրելու որոշման մասին տեղեկացվում է 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում: ✓ Վարկը վարկառուին տրամադրվում է առավելագույնը 10 աշխատանքային օրում: <p align="center"><u>ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ</u></p> <ul style="list-style-type: none"> ✓ <i>Վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունների (այդ թվում՝ սահմանված ժամկետներում վարկի գումարը և տոկոսագումարը չմարելու) չկատարելու դեպքում հաճախորդի նկատմամբ կիրառվում են տուժային սանկցիաներ, իսկ գրավի առարկան կարող է ԶԶ օրենսդրությամբ և կնքված պայմանագրերով սահմանված կարգով բռնագանձվել և իրացվել: Գրավի առարկայի իրացումից ստացված գումարը վարկառուի պարտքը չծածկելու դեպքում պարտքի մնացած գումարը կարող է մարվել վարկառուի այլ գույքի բռնագանձման և իրացման հաշվին:</i> ✓ <i>Վարկառուի կողմից իր վարկային պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում այդ տեղեկատվությունը կգրանցվի ԶԶ ԿԲ Վարկային ռեգիստրում և ԱԲՌԱ Վարկային բյուրոյում, որը բացասաբար կազդի վարկառուի վարկային պատմության վրա:</i> ✓ <i>Վատ վարկային պատմություն ունենալը Ձեր համար հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ այլ վարկեր ստանալիս:</i> 	